ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«26» հոկտեմբեր 2016թ. N 65

ք. Արմավիր

ԱՐԱՅԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածով, 161-րդ հոդվածի երկրորդ մասով, 164-րդ հոդվածով և 169-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման 1 հավելվածի 16-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2016 թվականի հունվարի 27-ի N 09-Ա հրամանով հաստատված հավելվածը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը.

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Արայիկ Հակոբյանին տրամադրել 2015-2016 աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն և լրացուցիչ արձակուրդները 2016 թվականի օգոստոսի 1-ից սեպտեմբերի 1-ը ներառյալ՝ 24 աշխատանքային /20 նվազագույն, 4 լրացուցիչ/ օր տևողությամբ:
2. Արայիկ Հակոբյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում բաժնի պետի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Վիգեն Խաչատրյանին:
3. Արայիկ Հակոբյանին աշխատանքի մեջ համարել 2016 թվականի սեպտեմբերի 2-ից:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ